Wikipedia
Education
Program

Ուղեցույց. Ինչպե՞ս Վիքիպեդիան օգտագործել դասավանդելիս

Վիքիմեդիա Հիմնադրամ

Վիքիպեդիան ազատ հանրագիտարան է, որը կարող է խմբագրել յուրաքանչյուր ոք։ Այն աշխարհի հինգերորդ ամենից շատ այցելվող կայքն է և օգտագործվում է շատ համալսարանների ուսանողների կողմից որպես աղբյուր։ Բացի այդ, աշխարհի շատ դասավանդողներ իրենց լսարաններում Վիքիպեդիան օգտագործում են որպես ուսուցման միջոց։ Այս գրքույկում հավաքված է այդ դասավանդողների փորձը, որպեսզի ձեզ համար ավելի հեշտ լինի որոշել լսարանում Վիքիպեդիայի օգտագործման եղանակը։

Գրքույկը կազմված է երեք մասից՝

Նախագծում

Իմացի՛ր Վիքիպեդիայի կարևոր ընթացակարգերի մասին, սովորի՛ր՝ ինչպես կազմել հանձնարարություն՝ կենտրոնանալով դասապրոցեսի ընթացքում Վիքիպեդիայում հոդվածներ գրելու վրա։

Կիսամյակի ընթացում

Կարդա՛ Վիքիպեդիայի որակյալ հոդվածների կառուցվածքի մասին, ինչպե՞ս ուսանողը պետք է ընտրի, թե ո՞ր հոդվածն է ավելի լավը, ինչպե՞ս պետք է հաղորդակցվել Վիքիպեդիայի խմբագիրների համայնքի հետ։

Կիսամյակից հետո

Այստեղ կգտնես Վիքիպեդիան օգտագործող հանձնարարությունների օրինակներ, որը հաջողությամբ օգտագործվել է այլ դասավանդողների կողմից։

Հիմնական կանոնակարգեր

2001 թվականի Վիքիպեդիայի ձևավորումից ի վեր կամավոր խմբագիրների համայնքը, որոնք կոչվում են վիքիպեդիստներ, հանրագիտարանի համար ստեղծել են մի քանի հիմնական կանոնակարգեր, որպեսզի Վիքիպեդիան հնարավորինս օգտակար և վստահելի լինի: Ցանկացած հանձնարարություն պետք է համապատասխանի այս կանոնակարգերին: Այս անկյունաքարային քաղաքականություններն ըմբռնելը կնշանակի, որ քո հանձնարարությունը համապատասխանում է քո կրթական նպատակին և միևնույն ժամանակ բարելավում է Վիքիպեդիան:

Ազատ բովանդակություն

«Ուսանողների ներդրումը Վիքիպեդիայում ազատ է և դառնում է ազատ բովանդակության մի մասը: Այն կարող են խմբագրել և օգտագործել ազատ արտոնագրի տակ: Այն ամենը, ինչ գրվում է Վիքիպեդիայում, պետք է լինի քո շարադրածը: Այլ աղբյուրներից պատճենում չի թույլատրվում»:
— Մասնակից:Lechatjaune

լուսանկարը Մասնակից:Lechatjaune-ի, CC-BY-SA 3.0

Վստահելի աղբյուրներ

«Վիքիպեդիայում ամենավստահելի աղբյուրները երրորդական ստուգելի աղբյուրներն են, ինչպիսիք են, օրինակ, ակադեմիական մամուլի կողմից տպագրված գրքերը, գրախոսվող գիտական ամսագրերը և միջազգային թերթերը: Պետք է խուսափես բլոգներից, մամուլի հաղորդագրություններից և այլ քիչ պաշտոնական աղբյուրներից: Ուսանողները պետք է օգտվեն այնպիսի աղբյուրներից, որոնք ծանրակշիռ տեսակետներ են ներկայացնում, այլ ոչ թե մեկանգամյա ուսումնասիրություններ են»:
— Մասնակից:Mariana Jó

լուսանկարը Մասնակից:Mariana Jó-ի, CC-BY-SA 3.0



Չեզոք տեսակետ

«Վիքիպեդիայում ամեն ինչ պետք է գրված լինի չեզոք տեսանկյունից Վիքիպեդիան փաստարկման կամ քարոզչության վայր չէ: Ամբողջ ինֆորմացիան պետք է ներկայացվի ճշգրտորեն և առանց շեղումների՝ նկարագրելով վստահելի աղբյուրներում հրապարակված բոլոր կարևոր տեսակետները: Դու պետք է ներկայացնես տարբեր տեսակետներ, մի՛ վիճաբանիր այս կամ այն տեսակետի համար»:
— Մասնակից:GorillaWarfare

լուսանկարը Մասնակից:GorillaWarfare-ի, CC-BY-SA 3.0

Նշանակալիություն

«Մենք կիրառում ենք նշանակալիություն հասկացությունը, որպեսզի որոշենք, թե արդյո՞ք տվյալ թեմայի վերաբերյալ կարելի է հոդված գրել: Ընդհանուր առմամբ մենք թեման համարում ենք նշանակալի, եթե վստահելի երրորդական աղբյուրներում տվյալ թեմային եղել է անդրադարձ: Եթե քո ուսանողները նոր հոդվածներ են սկսում գրել, ապա լավ կլինի նախ և առաջ վստահելի, անկախ մի քանի աղբյուրներ գտնեն»:
— Մասնակից:Mohamed Ouda

լուսանկարը Մասնակից:User:Faris knight-ի, CC-BY-SA 3.0

Բարի մտադրություններ

«Յուրաքանչյուր ոք, ով խմբագրում է Վիքիպեդիան՝ ներառյալ ուսանողները, պետք է բարի մտադրություններ ունենան մյուսների հետ համագործակցելիս: Սա նշանակում է, որ մենք հարգում ենք միմյանց և ենթադրում ենք, որ մնացածն էլ գործում են նույն նպատակի համար՝ բարելավել Վիքիպեդիայի բովանդակությունը: Մենք քաղաքավարության սահմաններից դուրս չենք գալիս, երբ քննարկում ենք վիճելի թեմաներ: Հիշի՛ր, որ միշտ պետք է քննարկել խմբագրվող թեման, այլ ոչ թե այն խմբագրողին, ինչպես նաև խուսափիր անձնական վիրավորանքներից»:
— Մասնակից:Mike Christie

լուսանկարը Մասնակից:Mike Christie-ի, CC-BY-SA 3.0

Հիմնական կանոնակարգեր

Վիքիպեդիայում կարելի է բազում առաջադրանքներ հանձնարարել՝ հիմնվելով քո կրթական նպատակների վրա: Հաշվի առ քո ուսանողի կարողությունները՝ որքա՞ն ներդրում ես ցանկանում, որ նա կատարի Վիքիպեդիայում և որքա՞ն դասաժամ դու կարող ես տրամադրել տվյալ հանձնարարությանը:

Այս գրքույկում ուսանողների հանձնարարությունն է հոդված գրել ընթացիկ դասին վերաբերող թեմաներից որևէ մեկով: Սա ամենատարածված առաջադրանք է, որ ուսուցիչները հանձնարարում են:

1

Առաջադրանք. գրել հոդված

Հանձնարարում ես քո ուսանողներին ստեղծել նոր հոդված կամ բարելավել արդեն առկա հոդվածը ընթացիկ դասին վերաբերող թեմաներից մեկով: Օգտվելով վստահելի աղբյուրներից՝ ուսանողները հավաքագրում են ինֆորմացիա (տեղեկություն) թեմայի վերաբերյալ: Հաճախ ուսուցիչներն այս հանձնարարությունը համակցում են ավելի երկար վերլուծական աշխատանքի հետ, որ պետք է ուսանողները կատարեն Վիքիպեդիայից դուրս:

Այլ հանձնարարություններ՝

Թարգմանել հոդված
Ըստ լեզվաբանների՝ սա ամենագործնական հանձնարարությունն է: Ուսանողներն ընտրում են այլալեզու Վիքիպեդիաների լավագույն այն հոդվածները, որոնք դեռևս չկան իրենց լեզվով Վիքիպեդիայում և սկսում են թարգմանել:

Հոդվածի պատկերազարդում
Եթե քո ուսանողները մեդիայի գիտակ են, ապա սա Վիքիպեդիայում ոչ տեքստային ներդրում կատարելու ամենալավ ձևերից մեկն է: Ուսանողները լուսանկարում են այն հուշարձանները, որոնց հոդվածներում պատկերներ չկան, ինֆոգրաֆիկաներ են ստեղծում, որոնք լուսաբանում են հոդվածները, կամ էլ տեսահոլովակներ են նկարահանում, որոնք պատմում են, թե ինչի մասին է հոդվածը:

Սրբագրում
Քանի որ Վիքիպեդիան ընթերցողների կողմից ստեղծվող ռեսուրս է, շատ վրիպակների կարելի է հանդիպել, իսկ տեքստը բարելավման ենթակա է: Հոդվածի քերականական սխալների ուղղումն ուսանողներին հանձնարարելը հրաշալի հնարավորություն է նրանց համար ձեռք բերել սրբագրական հմտություններ և քննադատական մտածողություն:

2

Կրթական նպատակներ

Ուսանողներին Վիքիպեդիայում հոդվածներ գրել հանձնարարելը սովորաբար բավարարում է այս կրթական 4 նպատակներին:

Գրավոր խոսքի զարգացում

Ուսանողները սովորում են գրել ընթերցողների հետաքրքրված և բազմազան շրջանակի համար, ովքեր աշխարհի առցանց բնակչության զգալի մասն են կազմում: Ավելին, քանի որ Վիքիպեդիան շեշտը դնում է ստուգելիության և «ոչ օրիգինալ հետազոտության» վրա, ուսանողներն ավելի լավ են սկսում հասկանալ գրավոր խոսքի փաստավորված և համոզիչ ոճեր:

Մեդիա և տեղեկատվական գրագիտություն

Վիքիպեդիայի թափանցիկ և համագործակցության միջոցով բովանդակության ստեղծման գործընթացը հնարավորություն է տալիս ուսանողներին ավելի խորն ուսումնասիրել, թե ինչպես է ստեղծվում և սպառվում տեղեկատվությունը Սա հրաշալի հնարավորություն է ընձեռում ուսանողներին խորհել հասանելի աղբյուրների և դրանց օգտագործման մասին:

Քննադատական մտածողություն

Ուսանողները սովորում են քննադատորեն վերլուծել Վիքիպեդիայի հոդվածները, որպեսզի սահմանեն, թե որքանո՞վ է լուսաբանված տվյալ թեման, ի՞նչ ինֆորմացիա է պակասում և որպեսզի գնահատեն, թե որքանո՞վ են հոդվածում տեղ գտած փաստերը հաստատված վստահելի աղբյուրներով: Այլ կերպ ասած՝ Վիքիպեդիայի հոդվածների գնահատումը քո ուսանողներին օգնում է սովորել գնահատել Վիքիպեդիայից զատ տարբեր աղբյուրներ: Արդեն գոյություն ունեցող հոդվածի գնահատման և պակասող տեղեկատվության հաստատման, գործընթացը շատ նման է գրական վերանայման գործընթացին, որը չափազանց կարևոր է գիտական հետազոտություններում:

Համագործակցություն

Ուսանողները սովորում են համագործակցել կամավոր խմբագիրների համայնքի հետ՝ բարելավել հանրագիտարանի բովանդակությունը: Նրանց կատարած աշխատանքի վերաբերյալ հաճախ կարծիքներ են հնչում, և նրանք սովորում են ընդհանուր հայտարարի հասնելու համար «բանակցել» այլ խմբագիրների հետ:

3

Ուսումնական ծրագրի

Փորձառու ուսուցիչները վկայում են, որ ուսանողների համար չափազանց կարևոր խնդիր է, որ ուսանողներն իրենց հարմար զգան ոչ միայն Վիքիխմբագրման գործիքներն օգտագործելիս, այլև համայնքի հետ շփվելիս: Ներքևում նշված փոքրիկ հանձնարարությունները կօգնեն նրանց վարժվել կայքին: Այն ուսուցիչների ուսանողները, ովքեր այսպիսի հանձնարարություններով չեն սկսել կիսամյակը, վատ առաջադիմություն են գրանցել: Այսպիսի պարզ հանձնարարությունները նախապատրաստում են ուսանողներին ավելի երկար հանձնարարության Վիքիպեդիայում՝ աստիճանաբար վերջիններիս ներկայացնելով այն հմտությունները, որոնք հետագայում խմբագրելիս նրանց պետք են գալու:

- Ուսանողները պետք է իրենց համար ստեղծեն մասնակցային էջ՝ իրենց մասին 1-2 նախադասություն գրելով և Վիքիպահեստից (Վիքիպեդիայի նիշքերի շտեմարան) պատկեր ավելացնելով:
- Ուսանողներին քաջալերել այնպիսի պատկերներ բեռնեն Վիքիպահեստ, որոնց հեղինակներն իրենք են:
- Ուսանողներին խնդրել ուղղումներ կատարել ընթացիկ դասի հետ կապված հոդվածներից մեկում:
- Ուսանողները կարող են ծանոթագրություններ ավելացնել հոդվածում:
- Որևէ հոդված ընտրելուց հետո ուսանողները պետք է հոդվածի քննարկման էջում նշեն այն աղբյուրները, որոնցից օգտվելու են հոդվածը բարելավելիս:
- Խնդրի՛ր ուսանողներին քննարկման էջում նշել այն փոփոխությունները, որոնք պատրաստվում են կատարել հոդվածում:

Երբ ուսանողներն այս բոլոր հանձնարարությունները կատարեն, նրանց համար ավելի հեշտ կլինի խմբագրել Վիքիպեդիան:

Այս գրքույկն առաջարկում է հանձնարարությունների պարզ ծրագիր, որը կիրառվում է ավելի քան 100 ուսուցիչների կողմից: Ներբեռնիր գրքույկը հետևյալ հասցեով՝
http://education.wikimedia.org/syllabus

Հոդվածի ընտրություն

Այն հոդվածների ընտրությունը, որոնց վրա պետք է ուսանողները աշխատեն, հեշտ գործ չէ: Որոշ ուսուցիչներ կազմում են ցանկեր և առաջարկում ուսանողներին ընտրել այդ հոդվածներից, մյուսներն էլ պահանջում են ուսանողներից ինքնուրույն ընտրել հոդված: Եթե դու ցանկանում ես, որ քո ուսանողները ստեղծեն նոր հոդվածներ, այլ ոչ թե բարելավեն արդեն եղածները, ապա համոզվիր, որ նրանք կարդացել են Վիքիպեդիայի նշանակալիության ուղեցույցը և համոզված են, որ ընտրված թեման նշանակալի է, այսինքն՝ տվյալ թեմային բազմիցս անդրադարձ եղել է վստահելի երկրորդային աղբյուրներում:

Ինչպիսի՞ն է Վիքիպեդիայի լավ հոդվածը: Համոզվիր, որ դու և քո ուսանողները բավականին լավ տիրապետում եք Վիքիպեդիայի հոդվածների կառուցվածքի առանձնահատկություններին: Ուսանողները պետք է իմանան, թե իրենցից ի՞նչ բաժիններ են պահանջվում, որ ավելացվեն հոդվածում: Հնարավոր է՝ շատ ուսանողներ նախկինում ծանոթ չլինեն հանրագիտարանային ոճին, այնպես որ մի քանի րոպե լսարանում անցկացնելը՝ պարզաբանելով, թե ինչպես պետք է հանրագիտարանային հոդվածը շարադրվի, կարևոր է:

Ի՞նչ պետք է անել

› Խնդրի՛ր ուսանողներիդ ընտրել այնպիսի թեմա, որը խորն ուսումնասիրելու եք դասերի ընթացքում, սակայն որը լավ չէ ներկայացված Վիքիպեդիայում Եթե տվյալ թեմայի մասին շատ աղբյուրներ կան, սակայն Վիքիպեդիայում քիչ տեղեկատվություն է ներկայացված, ապա սա ամենալավ տարբերակն է, որի վրա կարելի է աշխատել:

› Վիքիպեդիայում փորձիր գտնել անավարտ կաղապարը կրող հոդվածները և բարելավել:

› Նախքան որևէ հոդված ստեղծելը, մի քանի տարբերակներով փնտրիր տվյալ թեման Վիքիպեդիայում: Շատ հաճախ տվյալ թեմայով, սակայն այլ անվամբ հոդված լինում է Վիքիպեդիայում:

Ի՞նչ պետք չէ անել

› Խուսափի՛ր ընդգրկուն հոդվածներ բարելավել (օրինակ՝ օրենք) կամ այնպիսի հոդվածներ, որոնք Վիքիպեդիայում լավ որակ ունեն (ընտրյալ հոդվածներ): Այդ հոդվածներն ավելի դժվար է արդյունավետ բարելավել:

› Մի՛ փորձիր բարելավել այնպիսի հոդվածներ, որոնք հակասական են, օրինակ՝ գլոբալ տաքացում, հղիության արհեստական ընդհատում կամ գիտականություն: Հակասական հոդվածները հաճախ վեճերի առիթ են Վիքիպեդիայում: Փոխարենը, լավ կլինի՝ ուսանողները սկսեն աշխատել անավարտ հոդվածների վրա:

› Խուսափի՛ր աշխատել այնպիսի հոդվածների վրա, որի մասին քիչ գրականություն կա: Ուսանողները կդժվարանան վստահելի աղբյուրներ գտնել հոդվածի համար:

› Մի՛ ստեղծիր ոչ հանրագիտարանային վերնագրով հոդվածներ, օրինակ՝ «ԱՄՆ-ի և համաշխարհային տնտեսության վրա ազդած վերջին հիփոթեկային ճգնաժամի արդյունքները» վերնագրի փոխարեն պետք է գրել «Հիփոթեկային ճգնաժամ»: Վիքիպեդիան հանրագիտարան է, հետևաբար հոդվածների վերնագրերը ևս պետք է լինեն հանրագիտարանային:

Հոդվածի կառուցվածքը Վիքիպեդիայում

Վիքիպեդիայի որակյալ հոդվածը լավ կառուցված, հանրագիտարանային բովանդակության և ակտիվ

Ներածություն
Ներածությունը պետք է ամփոփ ներկայացնի հոդվածի կարևոր կետերը: Ներածությունը վերնագիր չունի: Առաջին նախադասությունը պետք է սահմանի հոդվածի թեման:

Տեղեկաքարտ
Շատ հոդվածներ ունեն տեղեկաքարտ, որում ներկայացվում է թեմայի գլխավոր տարրերը: Գտիր քո թեմային մոտ այլ հոդված, պատճենիր վիքիգծանշումը և ավելացրու քո հոդվածում:

Հիմնական հոդված
Վերնագրերը հստակ սահմանում են համապատասխան բաժինները: Այս հոդվածում հիմնական հոդվածը պատմում է պտտահողմի պատմության և ազդեցության մասին:

Պատկերներ
Վիքիպեդիայում ազատ արտոնագրով պատկերներ կարելի է ավելացնել Վիքիպահեստից:

Հավելվածներ և ծանոթագրություններ
Բովանդակությունից հետո գրվում են թեմայի հետ առնչվող Վիքիպեդիայի այլ հոդվածները («Տես նաև»), հոդվածում օգտագործված աղբյուրները («Ծանոթագրություններ») և այլ կայքերի հղումներ, եթե ընթերցողները ցանկանան հավելյալ ինֆորմացիա ստանալ («Արտաքին հղումներ»):



Create account Log in

Article Talk Read Edit View history Search

WIKIPEDIA The Free Encyclopedia

Main page
Contents
Featured content
Current events
Random article
Donate to Wikipedia
Wikipedia Shop

Interaction
Help
About Wikipedia
Community portal
Recent changes
Contact Wikipedia

Toolbox

Print/export

Languages
Català
Deutsch
Español
Euskara
Français
Português
Simple English
中文

Hurricane Irene (2005)

From Wikipedia, the free encyclopedia

This article is about the Atlantic hurricane of 2005. For the 2011 storm, see Hurricane Irene (2011). For other storms of the same name, see Tropical Storm Irene (disambiguation).

Hurricane Irene was a long-lived Cape Verde-type Atlantic hurricane during the 2005 Atlantic hurricane season. The storm formed near Cape Verde on August 4 and crossed the Atlantic, turning northward around Bermuda before becoming extratropical southeast of Newfoundland. Irene persisted for 14 days as a tropical system, the longest duration of any storm of the 2005 season. It was the ninth named storm and fourth hurricane of the record-breaking season.

Irene proved to be a difficult storm to forecast due to oscillations in strength. After almost dissipating on August 10, Irene peaked as a Category 2 hurricane on August 16 before being absorbed by a larger extratropical system late on August 18. Although there were initial fears of a landfall in the United States due to uncertainty in predicting the storm's track, Hurricane Irene never approached land and caused no recorded damage. However, swells up to 8 ft (2.4 m) and strong rip currents resulted in one fatality in Long Beach, New York.

Hurricane Irene
Category 2 hurricane (SSHS)

Hurricane Irene on August 15, 3 days before dissipating

Formed	August 4, 2005
Dissipated	August 18, 2005
Highest winds	1-minute sustained: 105 mph (165 km/h)
Lowest pressure	970 mbar (hPa); 28.64 inHg
Fatalities	1 direct
Damage	None
Areas affected	East Coast of the United States

Part of the 2005 Atlantic hurricane season

Contents [hide]
1 Meteorological history
2 Impact, records and naming
3 See also
4 References
5 External links

Meteorological history [edit]

Storm path

A vigorous tropical wave moved off the west coast of Africa on August 1, initially weakening due to cooler sea surface temperatures. It moved westward and passed near Cape Verde, where convection started to increase. The system became more organized and developed into Tropical Depression Nine on the afternoon of August 4, 690 miles (1100 km) southwest of the Cape Verde Islands.[1] Early on August 5, the depression abruptly turned to the northwest into an area of higher wind shear, causing some computer models to predict that the depression would dissipate, while others predicted steady strengthening. The sudden threat to the storm's existence prompted National Hurricane Center (NHC) forecaster Dr Lixion Avila to comment, "How little we know about the genesis of tropical cyclones."[2] Despite the unfavorable conditions in its vicinity and its poor organization, Tropical Depression Nine continued to strengthen, becoming Tropical Storm Irene on August 7.[1]

Irene as a tropical storm on August 12

Because Irene was in an environment laden with dry air and high shear, it soon weakened to a tropical depression, on August 8.[1] On the morning of August 10, as it was passing north of the Lesser Antilles, Irene nearly dissipated into a remnant low, but forecasters predicted with "very low confidence" that the storm would survive.[3] However, warmer waters and less wind shear allowed Irene to become gradually more organized while south of Bermuda, and it became a tropical storm once again early on August 11.[1]

Due to uncertainties about how the region's subtropical ridge would interact with Irene, the models continued to give unclear signals of the storm's future. Some of the models predicted that Irene would make landfall in North Carolina, while others continued to anticipate that Irene would dissipate.[4] The uncertainty ended when a weakness in the subtropical ridge allowed Irene to turn sharply northward, which caused the storm to pass midway between the Outer Banks of North Carolina and Bermuda on August 15. Soon after, upper-level shear weakened greatly, and Irene rapidly intensified, first to a hurricane, then to its peak strength as a 105 mph (170 km/h) Category 2 hurricane on the afternoon of August 16, while located 350 miles (560 km) northeast of Bermuda; at the same time it also attained minimum pressure of 970 mbar.[1] Though NHC meteorologists thought it was likely that Irene would become a hurricane, they were not expecting an intensification of such a magnitude.[5]

Irene entered a region of increased wind shear and began to weaken, and as a result it was downgraded to a tropical storm early on August 18, when it was 520 miles (830 km) south of Cape Race, Newfoundland. Tropical Storm Irene finally became extratropical on August 18 after moving over much cooler waters, and was absorbed by a larger extratropical system later that day.[1] Irene lasted for 14 days as a tropical system, the longest duration of any storm of the 2005 season.[6]

Impact, records and naming [edit]

Satellite image of Tropical Storm Irene on August 14 off the coast of the United States

As Hurricane Irene stayed well away from land, no coastal warnings or watches were issued for it. Despite Irene's long life there were no reports of tropical storm force winds affecting ships. There were no damage or fatalities as a result of Irene.[1] However, the hurricane generated strong waves and increased the risk of rip currents along the East Coast of the United States. Many beaches in New Jersey restricted swimming activities, and lifeguards at one beach performed more than a hundred rescues over a three-day period.[7] Waves along the coastline of New York reached 4 to 8 ft (1.2 to 2.4 m).[8] On August 14, a 16-year-old boy drowned after being caught in a rip current near Long Beach, New York on August 14.[8][9] His body was recovered on August 16 after washing ashore.[8]

When Tropical Storm Irene formed on August 7, it was the earliest date for the formation of the ninth tropical storm in an Atlantic hurricane season, beating the previous record held by a storm in the 1936 season by 13 days. This storm also marked the fifth occasion the name "Irene" had been used to name a tropical cyclone in the Atlantic.[6] Due to the lack of effects on land from Hurricane Irene, the name was not retired by the World Meteorological Organization and was reused in the 2011 Atlantic season.

See also [edit]

- List of 2005 Atlantic hurricane season storms
- Timeline of the 2005 Atlantic hurricane season
- List of New Jersey hurricanes

Tropical cyclones portal

References [edit]

1. ^ a b c d e f g National Hurricane Center. "Tropical Cyclone Report: Hurricane Irene" (PDF). NOAA. Retrieved April 24, 2006.
2. ^ National Hurricane Center. "Discussion for Tropical Depression Nine, 11:00 a.m. EDT, August 05 2005". NOAA. Retrieved April 24, 2006.
3. ^ National Hurricane Center. "Discussion for Tropical Storm Irene, 5:00 a.m. EDT, August 10, 2005". NOAA. Retrieved April 24, 2006.
4. ^ National Hurricane Center. "Discussion for Tropical Storm Irene, 11:00 a.m. EDT, August 11, 2005". NOAA. Retrieved April 28, 2006.
5. ^ National Hurricane Center. "Discussion for Tropical Storm Irene, 5:00 p.m. EDT, August 14, 2005". NOAA. Retrieved April 24, 2006.
6. ^ a b National Hurricane Center; Hurricane Research Division; Atlantic Oceanographic and Meteorological Laboratory (April 2012). "Atlantic hurricane best track (Hurdat)". United States National Oceanic and Atmospheric Administration's Office of Oceanic & Atmospheric Research. Retrieved 2012-04-19.
7. ^ Associated Press (August 16, 2005). "Hurricane Irene Affecting Jersey Shore". 6ABC. Retrieved May 10, 2006.
8. ^ a b c Richard Weir and Michael White (August 16, 2005). "Lost Boy's Body Found On Shore". New York Daily News. Retrieved December 29, 2009.
9. ^ "NCDC Event Report: New York Rip Current". National Climatic Data Center. 2005. Retrieved April 13, 2009.

External links [edit]

- National Hurricane Center's archive on Hurricane Irene
- National Hurricane Center's Tropical Cyclone Report on Hurricane Irene
- Photo gallery of surf from Hurricane Irene in North Carolina
- NASA article on Irene's rainfall

Wikimedia Commons has media related to: Hurricane Irene (2005)

V · T · E

Tropical cyclones of the 2005 Atlantic hurricane season

A B C D E F G H I 10 11

Saffir–Simpson Hurricane Scale

Ուսանողներին հիմնական վիքիգծանշում

Դասընթացի առաջին մի քանի շաբաթների ընթացքում խորհուրդ է տրվում ուսանողներին ներկայացնել Վիքիպեդիայի հիմնական կետերը՝ ներառյալ ցուցումներ, թե ինչպես խմբագրել և թե ինչով է Վիքիպեդիայում հոդված գրելը տարբերվում սովորական էսսե գրելուց:

Եթե ժամանակ ունես, ուսանողներիդ տար համակարգչային սենյակ և ցույց տուր վիքիխմբագրման գործիքները: Դա հնարավորություն է տալիս ուսանողներին իրականում տեսնել, թե ինչպես են խմբագրում Վիքիպեդիայում, ինչպես նաև նրանք կարող են խմբագրելուն զուգընթաց հարցեր ուղղել քեզ: Սովորաբար այսպիսի վորքշոփերը տևում են 1-2 ժամ: Եթե դու վստահ ես քո վիքիգիտելիքների վրա, ապա կարող ես ինքդ ուսանողներին սովորեցնել խմբագրել, իսկ եթե ոչ, կարող ես դիմել տեղի որևէ վիքիպեդիստի, ով կօգնի քեզ:

Ի՞նչ պետք է սովորեցնել վորքշոփին

- Թավատառ և շեղատառ տեքստ
- Ինչպես վերնագիր դնել
- Ինչպես խմբագրել առանձին բաժիններշ
- Ինչպես ստեղծել համարակալած և չհամարակալած ցանկեր
- Ինչպես ստեղծել հղումներ
- Ինչպես դնել ծանոթագրություններ
- Ինչպես ստեղծել ավազարկղ
- Հոդվածների, քննարկման էջերի և մասնակցային էջերի տարբերությունները
- Քննարկման էջերի կիրառում

If you'd rather have students do this on their own time, an online training covering this material is available at:
http://enwp.org/WP:STUDENT

Լավ կլինի, եթե ուսանողները նախապես ստեղծեն մասնակցային հաշիվներ: Դա նրանց հնարավորություն կտա ծանոթանալ Մասնակցային անունների կանոնակարգին և որոշել, թե ինչ աստիճանի անանուն են նրանք ցանկանում մնալ (այսպես նրանք կխուսափեն նաև տեխնիկական խնդիրներից, քանի որ մեկ այ փիից հնարավոր չէ 6-ից ավել մասնակցային հաշիվ ստեղծել):

Ինչո՞վ է տարբերվում Վիքիպեդիան էսսեից

Ահա մի քանի կետ, որոնք ցույց են տալիս, որ Վիքիպեդիայում խմբագրելիս ուսանողները պետք է ավելի շատ մտածեն.

Հոդվածը պետք է փաստերի հիման վրա գրված լինի:
Զուտ փաստեր գրելու փոխարեն ուսանողները պետք է նկարագրեն հոդվածի թեման՝ հիմնվելով վստահելի աղբյուրների վրա:

Պաշտոնական ոճ և պարզ գրավոր խոսք:
Հոդվածները պետք է գրվեն պաշտոնական ոճով, սակայն բոլորին հասկանալի բառապաշարով: Վիքիպեդիան այն տեղը չէ, որպեսզի ուսանողները ցույց տան իրենց հարուստ բառապաշարը: Վիքիպեդիայի ընթերցողները բազմազան են, ովքեր հնարավոր է երբեք լսած չլինեն տվյալ թեմայի մասին նախկինում և կարդալով հոդվածը՝ նրանք պետք է հասկանան, թե ինչի մասին է այն: Ուսանողները պետք է ընթերցողին հստակորեն փոխանցեն հոդվածի թեման:

Ոչ մի մեծ քաղվածք:
Ակադեմիական գրական խոսքում խրախուսվում են վստահելի աղբյուրներից մեծ քաղվածքները, սակայն Վիքիպեդիայի կանոնակարգերը ասում են, որ դրանք պետք է հնարավորինս վերաձևակերպել: Ուսանողները պետք է փորձեն տեքստը փոխանցել իրենց իսկ սեփական բառերով և միայն 1-2 արտահայտություն ներկայացնեն բնօրինակից քաղվածքի միջոցով:

Փոխգործակցել համայնքի հետ

Համագործակցելով վիքիհամայնքի հետ՝ քո ուսանողները կարող են միայն շահել: Բայց ինչպե՞ս անել դա:

լուսանկարը Jelly Helm, CC-BY-SA 3.0

Վիքիպեդիստները համագործակցում են միմյանց հետ հաղորդագրություններ գրելով միմյանց կամ հոդվածների քննարկման էջերում: Եթե որևէ մասնակից ցանկանում է հաղորդակցվել քեզ հետ, ապա նա ամենայն հավանականությամբ հաղորդագրություն կթողնի քո քննարկման էջում կամ էլ այն հոդվածի քննարկման էջում, որի վրա դու աշխատում ես: Լավ կլինի, որ հետևեք և պատասխանեք այդ հաղորդագրություններին:

Փոխհամագործակցումը Վիքիպեդիայում բարի մտադրություններ է ենթադրում, մինչև հակառակն է ապացուցվում: Մենք ենթադրում ենք, որ այլ խմբագիրներն այստեղ են, որպեսզի օգնեն բարելավել հանրագիտարանը: Այդ իսկ պատճառով բոլոր խմբագիրներին պետք է հարգանքով վերաբերվել:

Վիքիպեդիայի հոդվածներում փոփոխություններ կատարելիս՝ ենթադրվում է, որ խմբագիրները պետք է կարճ բացատրեն այդ փոփոխությունների պատճառը խմբագրման ամփոփման մեջ: Եթե դու խմբագրման ամփոփման մեջ նշես «սրբագրում» կամ «ծանոթագրության ավելացում», մյուսները հնարավորություն կունենան հետևել հոդվածի պատմությանը՝ սեղմելով «Դիտել պատմությունը» կոճակը:

Վիքիէթիկետ

Ինչպես ցանկացած համայնք, Վիքիպեդիան ևս ունի վարվելակարգ: Այս մի քանի պարզ ուղեցույցները կօգնեն վիքիպեդիստների հետ շփվելիս.

- Ենթադրի՛ր բարի մտադրություններ: Ենթադրի՛ր, որ մյուս խմբագիրները փորձում են բարելավել նախագիծը: Փորձի՛ր հասկանալ նրանց տեսակետը: Քննարկի՛ր: Համագործակցի՛ր:
- Եղի՛ր քաղաքավարի և հիշի՛ր, որ գրավոր խոսքում ավելի հեշտ է հեգնանք և ծաղր գտնելը, քան բանավոր խոսքում:
- Քննարկման էջերում միշտ ստորագրի՛ր քո գրառումներից հետո՝ նշելով 4 թիլդաներ (~~~~), որպեսզի մյուսները կարողանան տեսնել, թե ով է իրենց հետ հաղորդակցվում: 4 թիլդաներն ավտոմատ կավելացնեն քո մասնակցային անունը և գրառման ամսաթիվն ու ժամը:
- Հոդվածում նախքան մեծ փոփոխություններ կատարելը քննարկի՛ր դրանք հոդվածի քննարկման էջում:
- Քննարկի՛ր հոդվածի նյութը և ոչ թե խմբագիրներին:

Կիսամյակից հետո

Ուսանողների աշխատանքի գնահատում

Ինչպե՞ս դու կարող ես գնահատել ուսանողներիդ կատարած ներդրումը Վիքիպեդիայում: Կախված հանձնարարության բարդությունից՝ կարելի է գնահատման չափորոշիչներ սահմանել: Ահա այդպիսի չափորոշիչներ, որոնք օգնել են այլ ուսուցիչների:

5% (x4)	Մասնակցությունը վիքիվարժություններին
10%	Մասնակցությունը քննարկումներին
10%	Գրախոսականներ և համագործակցություն
50%	Վիքիպեդիայում ներդրումների որակ
10%	Ամփոփիչ էսսե

գնահատական

Վիքիվարժություններ
Արդյո՞ք քո ուսանողները կատարել են ուսումնական ծրագրի բոլոր ուղենիշերը (նշված են էջ 5-ում)

Քննարկում լսարանում կամ գրառում բլոգում
Շատ ուսուցիչներ խնդրում են ուսանողներին գրառումներ կատարել բլոգում իրենց փորձառությունների մասին: Ամեն շաբաթ կամ երկու շաբաթը մեկ նրանց այնպիսի հուշումներ տալով, ինչպիսիք են «Որչա՞փ անկախ են Վիքիպեդիայի խմբագիրները և ինչո՞ւ»՝ կօգնի ուսանողներին խորհել առցանց հանրագիտարանի համայնքին շրջապատող ավելի մեծ հարցերի մասին: Դա նաև գնահատման նյութ կտա քեզ թե՛ վիքիում, թե՛ դրանից դուրս: Եթե ժամանակ ունես, ապա դեմ առ դեմ քննարկումները կարող են ավելի կառուցողական լինել:

Գրախոսականներ և ակնարկներ
Ուսանողները գնահատում են միմյանց կատարած աշխատանքը Վիքիպեդիայում՝ գրախոսականներ թողնելով կայքում կամ դրանից դուրս: Այսպիսի գնահատումները կարող են պարզել, թե որքա՞ն վստահելի են ծանոթագրությունները, որքա՞ն լավ է լուսաբանված հոդվածի թեման կամ որքա՞ն լավ է գրված հոդվածը:

Ներդրումների որակը
Շատ ուսուցիչներ, օգտվելով «Դիտել պատմությունը» կոճակից, ցույց են տալիս, թե հոդվածն ինչ տեսք ուներ նախքան ուսանողը կաշխատեր դրա վրա և այժմ: Դու կարող ես համեմատել հոդվածի նախնական տեսքը վերջնականի հետ, առանձնացնել ուսանողների կատարած ներդրումը և տեսնել ուսանողների կատարած անհատական փոփոխությունները:

Անդրադարձ/ամփոփիչ էսսե
Հանձնարարությունից հետո խնդրի՛ր ուսանողներին կարճ էսսե գրել Վիքիպեդիայում ունեցած իրենց փորձի մասին: Սա լավ է աշխատում և՛ կարճ, և՛ երկար Վիքինախագծերի դեպքում: Հետաքրքիր կլինի, եթե ուսանողներն էսսե գրեն նաև նախքան Վիքիպեդիայում գրելը՝ նշելով իրենց սպասելիքները, իսկ հաջորդ էսսեում բացահայտեն, թե հանձնարարությունն ավարտելուց հետո որքանով են արդարացել իրենց սպասելիքները:

Լրացուցիչ ռեսուրսներ

Ուսուցիչների համար

Ուսումնասիրվող դեպքեր: Ինչպե՞ս են ուսուցիչները Վիքիպեդիան ընդգրկում ուսումնական ծրագրում
Այս գրքույկում ներառված է 6 երկրներից 15 պրոֆեսորի փորձը: Նրանք բացատրում են, թե ինչպես են ընդգրկել Վիքիպեդիան իրենց ուսումնական ծրագրում և թե ինչպես են ավարտել իրենց հանձնարարությունները:
http://education.wikimedia.org/casestudi

Ուսումնական ծրագրի նմուշ
Շաբաթական ուղեցույց, թե ինչպես «Հոդված Վիքիպեդիայում» հանձնարարությունը ներառել ուսումնական գործընթացքում: Այն հաստատում է, որ ուսանողները, խմբագրելով Վիքիպեդիայում, կրթական մեծ ձեռքբերումներ են գրանցում:
http://education.wikimedia.org/syllabus

Առցանց կողմնորոշման թերթիկ
Նախընտրելի է, որ բոլոր ուսուցիչները, նախքան ուսումնական ծրագիրը ծրագրելը, ընթերցեն իրենց համար նախատեսված առցանց կողմնորոշման հարցաթերթիկը: Այն քեզ կներկայացնի Վիքիպեդիայի մշակույթը և կանոնները, խմբագրելու հիմունքները և կծանոթացնի Վիքիհանձնարարությունների հետ:
http://enwp.org/WP:EDUCATOR

Ուսանողների համար

Բարի գալուստ Վիքիպեդիա
Վիքիպեդիայում խմբագրելու հիմունքների ներկայացում՝ ինչպես ստեղծել մասնակցային հաշիվ Վիքիպեդիայում, ինչպես սկսել խմբագրել և ինչպես հաղորդակցվել այլ խմբագիրների հետ: Դու կիմանաս նաև, թե ինչպես են հոդվածները զարգանում Վիքիպեդիայում:
welcometowikipedia



Խմբագրման հիմունքներ
Նախընտրելի է, որ ուսանողներն առցանց ուսուցում անցնեն, թե ինչպես կարելի է ներդրում ունենալ Վիքիպեդիայում:
http://enwp.org/WP:STUDENT

Wikipedia
Education
Program

Պատրա՞ստ ես միանալ Վիքիպեդիա կրթական ծրագրին

Վիքիպեդիա կրթական ծրագիրը շատ երկրներում է գործում, և ամեն կիսամյակ Վիքիմեդիայի կամավորները նոր ծրագրեր են կազմում: Այն երկրներում, որտեղ արդեն գործում է Վիքիպեդիա կրթական ծրագիրը, Վիքիպեդիայի կամավոր դեսպանները կարող են օգնել քեզ և քո ուսանողներին՝ ցույց տալով Վիքիպեդիայում ներդրում կատարելու լավագույն ուղիները:

Միացի՛ր մեզ: Հավելյալ տեղեկությունների համար այցելի՛ր:
http://education.wikimedia.org

Վիքիպահեստի բոլոր պատկերները հասանելի են Հղում-համանման տարածում (CC-BY-SA) կամ հանրային սեփականության արտոնագրի ներքո, եթե այլ բան նշված չէ: Գրքույկի բովանդակությունը հասանելի է Հղում-համանման տարածում 3.0 (CC-BY-SA 3.0, http://en.wikipedia.org/wiki/Wikipedia:CC-BY-SA) կամ ավելի նոր արտոնագրի ներքո:

Հղում-համանման տարածում արտոնագիրը չի տարածվում Վիքիմեդիա Հիմնադրամի կամ այլ կազմակերպությունների ապրանքանիշերի և լոգոների վրա: Վիքիմեդիա Հիմնադրամը, Վիքիպեդիան, Վիքիպահեստ, ՄեդիաՎիքին, Վիքիբառարանը, Վիքիգրքերը, Վիքիդարանը, Վիքիլուրերը, Վիքիքաղվածքը, Վիքիհամալսարանը, Վիքիցեղերը և ՄետաՎիքին Վիքիմեդիա Հիմնադրամի գրանցված ապրանքանիշերն են:

Հավելյալ տեղեկությունների համար կարող ես այցելել մեր ապրանքանիշերի քաղաքականության էջ՝

http://wikimediafoundation.org/wiki/Trademark_Policy.

Այլ հարցերի համար՝ կապված արտոնագրման կամ ապրանքանիշերի քաղաքականության հետ, կարող ես էլ նամակ ուղարկել հետևյալ հասցեին՝
legal@wikimedia.org

10% post-consumer recycled fiber,
elemental chlorine-free process,